Տարոն Անդրանիկի Մարգարյան

Ծնվել է 1978 թվականի ապրիլի 17-ին Երևանում: 1995թ. էքստեռն կարգով ավարտել է Ավանի թիվ 177 դպրոցը և նույն թվականին ընդունվել Հայկական գյուղատնտեսական ակադեմիա:

2001թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի մագիստրատուրան և ստացել ճարտարագիտության մագիստրոսի աստիճան՝ գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ:

2001-2003թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանումում որպես առաջատար մասնագետ, այնուհետև՝ բաժնի պետ:

2003թ. նշանակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ:

2005թ. ընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավար:

2008թ. վերընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավարի պաշտոնում: 2009թ. մայիսի 31-ին ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

2009թ. հուլիսի 7-ին միաձայն ընտրվել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

2011թ.նոյեմբերի 15-ին Երևան քաղաքի ավագանու կողմից ընտրվել է Երևանի քաղաքապետ:

2005 թվականից <<Խութ>> բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է:

1996 թվականից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, իսկ 2006 թվականից՝ ՀՀԿ խորհրդի անդամ:

1998-2011թթ. ղեկավարել է Հայաստանի հանրապետական կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհուրդը:

2010թ. ընտրվել է ԵԿՄ վարչության անդամ, 2012թ. փետրվարի 18-ին կայացած ԵԿՄ 9-րդ

համագումարում՝ վերընտրվել: 2012թ. ընտրվել է ԵՃՇՊՀ խորհրդի նախագահ:
2012թ. մարտի 10-ին ՀՀԿ 13-րդ համագումարում ընտրվել է Գործադիր մարմնի անդամ:
2013թ. մայիսի 5-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքում վերընտրվել է Երևանի ավագանու անդամ, հունիսի 8-ին վերընտրվել է Երևանի քաղաքապետ և հունիսի 11-ին հանդիսավոր երդմամբ ստանձնել Երևանի քաղաքապետի լիազորությունները:
Հասարակական-քաղաքական գործունեության ընթացքում պարգևատրվել է. ՀՀ նախագահի կողմից՝ Անանիա Շիրակացու մեդալով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից՝ ՀՀ ԱԺ պատվո մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝<<Գարեգին Նժդեհ>> և <<Անդրանիկ Օզանյան>> մեդալներով, Երևանի քաղաքապետի կողմից՝ Ոսկե մեդալով, Հայաստանի ագրարային համալսարանի ոսկե մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով և <<Լեռնահայաստանի Արծիվ>> ոսկե հուշամեդալով, Երկրապահ կամավորականների միության կողմից՝ <<Սպարապետ Վազգեն Սարգսյան>> շքանշանով: <<Հայաստանի համայնքների միության>> կողմից՝ ոսկյա, անվանական հուշամեդալով՝ Հայաստանում տեղական ժողովրդավարության զարգացմանն անձնական նշանակալից ներդրման համար: ՀՀ ոստիկանության պետի կողմից՝ <<Համագործակցության համար>> մեդալով: Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) կողմից՝ թանգարանային գործում ունեցած ավանդի համար մեդալով:
Տարոն Մարգարյանի պաշտոնավարման ընթացքում Ավան համայնքը երկու տարի անընդմեջ ճանաչվել է ՀՀ լավագույն թաղային համայնք: Ամուսնացած է, ունի մեկ դուստր և չորս որդի: